

ՄԵՐ ԱՐԳԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի «Արծիւ»-ին խօսքերը. — Թղթահայ մահը. — Անձնական տպաւորութիւններ.

գրականութենէն. — Ռուսահայ վիպասանի մը

Ամերիկահայ մամուլը, այսօր, իր գազաթնակէտին է: Թրքահայ գրականութեան կեդրոնը՝ Կ. Պոլիսն է. ամերիկահայինը՝ Պոսթոն: Այդ երջանիկ նոր-Աշխարհին մէջ՝ հայ պարբերականի մը դադարումը այնչափ հազուագիւտ է՝ որչափ թուրքիոյ մէջ թերթի մը անընդհատ յարատեւելը: Համեմատութիւնը, սակայն, կը սիրեմ յուլիս 11-էն առջի օրերուն համար ըրած ըլլալ...

Պոսթոնի մէջ հրատարակուող մէկ թերթն է նաեւ «Արծիւը, կիսամեայ, ազգային-գրական-քաղաքական: Գոյն ունի մանր այս տարուան (Բ տարի) 18-րդ թիւը, զոր կ'ուզեմ թղթատել:

Միսաք Մեծարենց դեռ կ'ապրի... մըտքերու և գրքերու մէջ. վասն զի ամէն մարդ թւկատիկի բախտը չունենար, միտնելու և յարութիւն առնելու: Շատ գրուեցաւ «Երածան»ի հեղինակի մասին, որ շատ բան չգրեց, և որուն շնորհակցութեան վրայ՝ համակրելի չեմ գիտեր ինչ մ'աւելցուց իր վաղամեռիկ ըլլալը:

«Արծիւ»ին մէջ պ. փոստերայ փոքրիկ գրութիւն մը նուիրած է նոյն բանաստեղծին: Ասոր մահուան առթիւ, յուլիսին, բազմաթիւ յօդուածներուն մէջ՝ պ. Յ. Տ. - Յակոբեանինը (Մահ. Էփրատ) լաւագոյն պատկերացումն էր Միսաքին: Հիմայ երկրորդ մըն ալ պ. փոստարայէն:

Աշտոմամուտի մը տամուկ առտուամցով կ'ըստիմ թէ ու աշումի ամուշ ղեղմութիւնովը քաղցրիկ վարդի մը չափ փարիկ, գգուելի ու վաղաթաղած եղաւ ամ' Միսաքը, Գիշերներու, Իրիկուններու, Ամօրելի ու Հաւատքի խորհրդաւաղաւ, գիրգայնիկ բանաստեղծ, ստուերներու չափ փափուկ ու մաշկը, որ քթիմով մը մը չափ կայր՝ ապրիցաւ, այս կեանքիմ պատրամքը ծծեց կենսաբաղձը, բայց յաւերժութեան դափնիմ ցուկաւիմ ինք իր միմար մասններով իսկ հիւսեց:

Պէտք է միշտ քիչ մը միտքիբարար խօսիլ այդ «զգացումին և մանաւանդ խորհուրդին» բանաստեղծին վրայ, «որ թերեւ միտքէն ըսած ըլլար. Գուրեան մը ըլլայի ու անոր տարրեցովն իսկ մեռնէի»:

Միտաւ ամ... ու մարդ չգիտեր Մարիմ զաւուսիւրը, ամոր հետ քերած շնորմը այնքան շուտ տարաւ զինքը զիրկընդիսանուիլ մահիմ հետ, թէ իր զգացումներու, խորհուրդներու զերթրութիւնն ու խորոմկութիւնը մահացուցիմ զինքը... ինչիմ տղայ, զեռ հագիւ աղուամագուող ծծատիւ...

Նայաղներու, շահարիկներու երազ պատմութեաններու փէշերէմ առկախուած գնաց ու Յոյսի, Հոգեմքի մեղմիկ հովիտում քացած բանաստեղծ հոգիին առաջատները:

«Այսօր լոյսի ծալի մը մէջ արթնեցայ».

«Լոյսի ծալի մը» վրայ ըստու Միսաքը իր հոգիին պատմութեանները... Ամուշ հոգի. որ այնքան քաղցրօրով ու լոյսի գիտել իմիծախտաւորի ազատ արտաստեղծի կաթկթիմ ու ճոգիմ լացմիկ իր ամուշ մեղմիկներում ունկնդիրները:

*

Մեծարենցի մահէն հինգ ամիս առաջ, «ապուշ գնդակ»ի մը հարուածով, աւելի մեծ, աւելի տրեղերական դէմք մը կ'անհետանար թուրքիոյ գրականութենէն փետրուարի այդ նշանաւոր օրէն ի վեր՝ յղացուած է անոր յուշարձան մը կանգնելու գաղափարը:

«Արծիւ»ին մէջ նոյն ինչիւրը կը յուզէ այս անգամ պ. Մ. Պէրպէրեան, որ Ռուսահայերու այդ մասին փութկոտութիւնը շնորհաւորելէ վերջ՝ ամերիկահայերուն կը դառնայ՝ անոնց անտարբերութիւնը մըտրակելու համար:

Յուշարձան մը Արիփարին. — բայց նախ ո՞վ է սա. այսօր մենք չափազանց մօտ ենք անոր, զայն լաւ կը ճանչնանք, գործերը դեռ թաւմ են, իր գրականութիւնը վայելած ենք. բայց պէտք է զայն վաղուան սերունդին ալ ճանչցնել: Ինչ

որ իր իսկութիւնը կը կազմէ՝ իր գրական մարդ ըլլալն է։ Արդ, հրապարակի վրայ գրեթէ չի տեսնուիր Արփիարը, զոր գրածներու համար՝ պէտք է մարդ նեղութիւնը յանձն առնէ՝ Հայրենիքներն ու Նոր կեանքերը, Լուսարկներն ու ճիւղակները թերթելու ինչ էջեր, ինչպիսի՝ վէպիկներ, դրուագներ, Հոգովորէններ այդ թերթերուն մէջ ցիրուցան եղած, ժամանակաւ «Շիրակ»ին մէջ ինք կը զանգատէր հասարակութենէն՝ թէ իրեն չի նպաստեր վէպիկներ շարադրելու։ Եւ հիմայ՝ որ ալ չի կրնար գրել, զանգատ պիտի յայտնէր անշուշտ՝ թէ հանրութիւնը իր երկերը չի ուզեր հաւաքել։ Արփիարը աւելի՛ պիտի սիրուի այդ ժողովածու հատորով՝ որ ամենուն ձեռքը պիտի տեսնուի՝ քան յուշարձանով մը՝ որ Ափրիկէի մէջն է։

*

Թշուառ, բայց ուրիշ տեսակ վախճան ունեցաւ Եղ. Տէմիրճիպաշեան, որ «Քաղմավէպ»ներու մէջ (1902) խափառ քննադատուած է Արփիարէն։ Պէտք կը զգայ մարդ մեղմացնելու զրչի մեծ մարդէն այդ քննադատումը, սակայն միւս կողմէն մեռածու մը կը համարէ... Ուրեմն ինչպէս ըլլալու էր քննութիւնը։ Բազմանկիւն ու տարօրինակ մտքի մը ձգբեր նկարագրութիւնը՝ դուրին բան չէ, առ նուազն։ Դարձեալ պ. Տ. — Յակոբեան երիտասարդ զրազմոր համարձակեցաւ այդ փորձին։ Յետոյ վրայ հասան խինդի օրերը թուրքոյ համար։ Տէմիրճիպաշեան սկսած էր մտնել, «տարածութիւն Շիրակի Աղզ. Գեղեցիկանտան ամէնէն անշուշտ, ամէնէն լըռած մէկ կաւապատ խորշին մէջ»։

Այս տողերը կը կարդանք «Հայրենիքի Գրար»ին Գ թիւին մէջ, Յօդուածագիրը (Լ. Է.) հանրութեան ուշադրութիւնը կ'ուզէ հրաւիրել հետեւեալ կէտին վրայ.

Պարտական հմք — կ'ըսէ — հայիրս զայն դարձաւ պեղել, հոնկէց մեղրածորած Ատոմի ամիւսմնը փոխադրելով գերեզմանակաւ արտաքին շքիլ համբաւ, որովհետեւ ամօր պարզ յուղար. կաւորութիւնը և Յոյնիպի արձամարմնուած ամ. կիսի որ մէջ թաղուիլ՝ ուղղակի օրմանեանիմ հետ մեծ աղիւս ունի։

Թրքահայերը դեռ իրենց առնի օրերը կը շարունակեն։ Այդ զաղափարն ալ ցոյց կու տայ թէ հիասթափած չեն դեռ անոնք։

Նոյն շարաթաթերթին մէջ աչքի կը զարնէ պ. Աւակին մէկ ոտանաւորը, — Երեկ գիշեր։ Բանաստեղծը, դեռ նոր դարձած Ծուխցիբէն, կ'աշխատակցի «Հայրենիքի Գրար»ին, «Արեւելք»ին և ուրիշ թերթերու։ Առաջ ալ արդէն անուշադիր չէին անցնէր իր բանաստեղծութիւնները. բայց այսուհետեւ լաւագոյն ներշնչումով գրելու յոյսեր կու տայ։

Աւելի երկարաշունչ է պ. Ե. Գօլան. հետին Հասարակ համար ոտնազատ (vers-libre) բանաստեղծութիւնը։ Իբր նմոյշ՝ հոս քանի մը տող.

Երթամ Արեւելքիմ հուրքերում հետ՝ հերոսներով
(քարախում
որոնք մի քանիքիմ այրող վայրի միջուր լուս
(սաւորեցիմ,
հերթակ ամձառ հուրքերում հետ՝ զիւղիկի մա
(հուսմ մը համար հաւուցող
Երթամ Արեւելքիմ խոժոռ միջուկիմներ քաղ
(ցրացիմ...
Երթամ տնձիւրում ամտուր, կատարողէ՛ն քն
(զարմակ ու արեւելքիմ շքիլ...
... քաղցր է իմ շուշու, վասն զի հետուոր ամ
(տառներէն կու գամ,
Երկար ատեն ամոցն սկ խորքերում զաղտնիքն
(բժն քաղած,
Եւ ուրուափը լեցում է հոգիներու սոսախիմն
(քով։

Ասիական ստուերներու և սարսափներու մէջէն ազատուող Գօլանհետեւը կը ներկայացնէ հայ ազգը, որ աչքը Արեւմտաքի խաղաղ հորիզոններուն յառած՝ անոնց կ'ուզէ պատմել իր երէկուան աւրիտտ օրերը։ Ուսումնաւոր ամբողջովին միախմբակալութեան մէջ թաթխուած և հանուած է։

«Հայրենիքի Գրար»ին առաջին իսկ թիւէն՝ սկսած էր արդէն տեսնուիլ պ. Ա. հարոնեանի մէկ հոգեցունց վէպը, — Մայրերը, — որ դեռ կը շարունակուի յաճորդ թիւերուն մէջ։ — Եղբրամայրի՛ գաւառի կեանքէն պատկերը, — Անկուտար (ձախը, — չի կրնար քննադատուիլ. պէտք է որ նախ պատմողը իր ըսելիքը վերջացնէ։

Խմբագրապետը, պ. Սիւրմէան, միևնոյն Գ թիւին մէջ ունի «Փոսած ջիղեր» առաջնորդականը, կուռ, բայց խառնակ ոճով այդ յօդուածը՝ նոր սերունդ, նոր գաղափարներ կը մաղթէ՝ «փոսած ջիղերու գերեզմանին վրայ» բարձրացող, իսկ Գ թիւին խմբագրականը «Մինաս Չեքազ»ն է, — անշուշտ այդ հայրենասէր գրագէտին Պոլիս երթալուն առթիւ գրուած, — ու կը շօշափէ անոր կեանքին նշանաւոր գործերը Հայրենիքին համար, Յաջորդ թիւով՝ խմբագիրը կը խոստանայ գրել Ա. Զօպանեանի վրայ, — Թող խոստանայ՝ Թերթը աւելի շահաւէտ էջերով հրատարակել, կ'ըսեմ՝:

*

Թուրքիոյ և մասնաւորապէս Ռուսիոյ հայ թերթերը գումեցին վիպասան Մուրացանին մահը, Թիֆլիս, սեպտ. 12: «Ռուս գան»ի հեղինակն ալ այն գոհերէն է՝ որուն շարքին մէջ են նոյնպէս Աղամկան, Յ. Պարսեան, Պոռշեանը և՛ Ղաթախաբար՝ և այլն: Նա գերեզման կ'իջնէ 54 տարուան (ծն. 1854, Շուշի), մտաւոր ու ջղային սոսկալի հիւանդութենէ մը յետոյ: Իբր գրագէտ՝ իր մասին յայտնուած դատաստանները բաւական հակասական են¹, Խարազան կը գրէ:

Մուրացամը այն շատերից մէկն է, որոնց հայ հասարակութիւնը չէ գնահատել... Իր Ռուսան և Գեորգ Մարգարեանի գրուածքներով իրաւունք ունի դասուելու ամենալաւ հայ վիպագիր Թա. տիրագիրների կողքին. և եթէ մա ասորէր օտար միջավայրում, գրէր օտար լեզուով, ամշուշտ այժմ մա որպէս պատմական և իրական կեանքի մի լաւ վիպագրող շատ մեծ մշակունքիւն կուրնեմար:

Նոյն հիացմունքը, զայն Մանծօնի մը կողքին դնելու գաղափարը՝ նաև Թիֆլիսի Օր. Աղայեանի «Հայրենիք»ին մէջ:

Բոլորովին սակայն տարբեր նշանակու. Թին ունի Մուրացան՝ պ. Լէօի համար, որ զայն պարզապէս յետադիմական մը կը նկատէ, սև, խիստ գոյներով կը նկարագրէ «Գէորգ Մարգարեանի» ի հեղինակը, վիպագրողի նշոյլ մ'իսկ չգտնելով անոր մէջ:

Եւ հոս պիտի հետևիմ անձնական տըպաւորութիւններու՝ գործերը կրած եմ շուշեցի վիպասանին գործերը կարդալով:

Մուրացան բեղուն միտք մըն է. շատ բան գրած է: 30 տարի վաճառականի մը քով գործակատար՝ առաւօտ մը վիպասան ըլլալու փափագով արթնցաւ. և ալ չդադրեցաւ արտագրելէ: 1880—էն մինչև այսօր իր գրած վէպերը, զրոյցները, վիպակները՝ կրնան 10 մեծադիր հատորներ կազմել, ինչպէս 1904ին՝ Թիֆլիս հրատարակուած Ա հատորը: Գրագէտին առջև միշտ բաց էին Մեղու Հայաստանի, Նոր-Դարի, Լուսայի, Թատրոնի, Արձագանգի էջերը, որոնց մէջ նա կը գրէր, շատ կը գրէր:

Գրեթէ բոլոր վէպերուն նիւթը վերցուած է հայկական կեանքէն, զաւառի բարբերէն: Մուրացանին շատ յայտնի էին գիւղերուն վէրքերը. նա կը գորգգորայ անոնց վրայ. կը սիրէ՝ գեղջկական տեսարաններուն հետ՝ գիւղացւոյ խրճիթն ալ, անոր նիստուկացը: Հայ գիւղերու նկարը այնչափ իրական ու մանրամասն է՝ որ կը կարծէք թէ մէջն էք, Պետրոս Կամ. սարեանի հետ ընկերացած. գեղջկական լեզուն ալ կու գայ՝ պատրանքին օգնելու համար: Ընթերցողին ուշադրութիւնը գրաւուած է ամէն մէկ բլուրով, ծորձորով, վերջալոյսով, առուակով: Չըշ... Ուշադրութիւն. առուակի մը քովն ենք.

Ձր մայիլով ջրի փոքրութիւն, մա շարունակ խոխոջում, ազմուկ էր համում. Մի տեղ ժայռն.

1. «Հայրեն. Գնար»ին 5-րդ թիւին մէջ՝ նշանաւոր է պ. Գեօ. Արծրունիի Սեւ Օրիքը, որուն պնդման թամ. տը բայով վէպ մը սկսած է տեմնուիլ «Մանգ. Էֆ. Երար»ին մէջ, — 1896-ի կոտորածները այսօր կը պատմուին:

2. Հմտ. Արենիք, Թի. 6893. — Բիւզանդիոն, Թ. 8631. — Լէօ, Ռուսահայ Գրակ. 280-4. — Խարազան, Թ. 120. — Հայրենիք (Թիֆլիս), Թ. 15. — Միւր Զայմը, Թ. 100. — Մշակ, Թ. 191. —

ըր միմեանց վրայ կուտակուած, փորձում էին կարծես, վտակի հոսանքը արգիլել. իսկ սա աւազով ու խոնով մըսաց խորշերը լցած՝ իւր փըր-փրումը ակթմիւրը զանաւիժում էր ժայռերի բարձուքից: ... Մի ուրիշ տեղ ուտիմի՞մ կամայազեղ ուտիմի աջ ու ձախ տարածելով՝ հոսկանաորում էր մի փորքիկ ու վիճալ լցակ, որի շուրջը, կարծես, կարծկալուց գոցմամբ՝ համգոցաւումով էր այդտեղ ժայռերի խորշում և իւր շինք հայելու մէջ արտացոլում թէ՛ ակի կամայազարդ ուտեմի, թէ ժայռերը ու թուփերը և թէ երկմի կաւաւտակը («նոյի Ագաւոր», էջ 30):

Դուք գիւզերու մէջն էք ուրեմն, Տէր-Վանինին ու հայ գիւղացիներու հետ սեղանի նստած. սեղանի վրայ ամէն ինչ նահապետական է: Դուք անոնց կհանրով կ'ապրէք, անոնց լեզուն կը լսէք:

Մուրացանի լեզուն կոկիկ, յստակ է. ասոնց վրայ աշխուժն ու բնականութիւնն ալ կ'աւելնայ՝ երբ տեղական գաւառաւ բաքրաւոր կու գայ կը խառնուի:

Վէպը, իւր քով, յաճախ ճանապարհորդական նոթեր են, որոնց նա կը միացնէ քանի մը բնականութիւններ, ուղեւորի տպաւորութիւններ. պատմութիւններ կամ զրոյցներ են՝ որոնց մէջ նա կը զնէ իւր կեանքի փորձառութիւններէն, դիտողութիւններէն: Դուք ժամերով ներկայ էք խօսակցութեան մը՝ որ ոչ մի կնճիւռ չի լուծեր, ոչ ալ կը պատրաստէ, բայց ձեզ անելի յայտնի ցոյց կու տայ զորդին միտքը, ունեցած գաղափարները: «Առաքեալը» նորավէպին մէջ, օրինակ, գեղջական բոլոր գէպերու ներկայ էք. խնդիր կ'ըլլայ նոյն իսկ թէ 1 բուպլին ամիսը որչափ տոկոս կը բերէ. կը տեսնէք այն պատկերը՝ որուն առջև Միխիթար Աբրահաւ աղօթք բրած է, ամէն բան կը գտնէք հոն՝ բայ ի վէպէն, որ նիւթին վերնագիրն էր, և զոր արդէն մոռցաք: «Խորհրդաւոր Միանձնուհի»ն, «Հայ բողոքականի ընտանիքը» են, կը ծառայեն նոյնպէս Մուրացանի ծածուկ նպատակը ձեզի ցուցնելու՝ բայց առանց վիպական ձևի, որուն վրայ խորհած էք գրագէտը: Հոգ չի տանիր գիւտերու, և դուք սեկոտմը կը կազմէք թէ ան գիւտաւորութեան յատկութիւնը բնաւ չունի իր վէպերուն նիւթը՝ պ. Ատրպետի նիւթերուն չափ ճոխ չէ. հանգոյցները՝ եր-

բէք չեն յիշեցներ Բաֆֆիինները, և ոչ իսկ պ. Շիրվանզատէինները. ոճը՝ կարելի չէ բաղդատել պ. Ահարոնեանի ոճին հետ:

Իւր վէպերէն անելի յաշողութեամբ ծափահարուեցաւ իւր մէկ թատերախաղը, Ռուզան, ներկայացուած Աղամեանէն ու Հրաչեայէն:

Ռուզան՝ Հայ մելիքի մը աղջիկն է, որ կուտութեան գնով կ'առնէ հայրենիքի ազատութիւնը: Առասիկ տրամին ամբողջ նիւթը:

Կը գտնուիք ուրեմն գէպերի մը դիմաց՝ որ դիւցազնութիւն է ըստ Մուրացանի, և անյաջող փորձ՝ ըստ իս: Կըլլ պատահարի մը առջև՝ որուն կը դրդէ արդէն խեղճուկ բնութիւնը՝ հերոսութիւն մ'ընելէ շատ առդին է: Նոյն հարցը կը շօշափուի նաև Մուրացանի հայրենակցին՝ պ. Լէօի մէկ վէպին մէջ, — Միլիթի Աղջիկը: Միևնոյն վտանգին մէջ չէ՞ Գայիանէն ալ. սակայն վերջապէս կը տեսնէք զայն Սիւլէյմանպէյի դիակին ըով՝ խրոխտ, յաղթական, դիւցազնուհի: «Մելիքի Աղջիկ»ին հեղինակը՝ դիմադրութեան, անձնապաշտպանութեան հրդեհը կը պատրաստէ իւր այդ վէպով. — Մուրացանի Մելիքի աղջիկը՝ նոյն քաջ Ղարաբաղցիի զուակ՝ այդ ուժը իրմէ բարձր կը նկատէ. ու դուք, այսպէս, «Ռուզան»ի թատերագիրը կը գտնէք թոյլ, համակամ, թուլթոյ: Վարագոյրը զոգոցելուն՝ կը հրճուիք, ճիշդ է, հայրենիքի և հօր մը ազատման գաղափարով, զոր սակայն կը վազէ կ'արէ Ռուզանի թշուառութեան յիշատակը: «Ռուզան»ը մը փրկելու համար՝ մանուկ մը պիտի չսպաննէի՝ — ըսած է Վ. Հիւկո: Եւ Ռուզան՝ սպանուելէ՝ անելի վատթարն եղած է: Qu' elle mourût! պիտի գոչէլ տար անշուշտ Գոռնէյլ Որատիոսի հօր: Ու մտածել թէ Մուրացան իւր Ռուզանը ոչ միայն Գայիանէ՝ այլ նոյն իսկ Աթաւա մը չկըցաւ ընել...

Բայց միշտ իբր վիպագրող պիտի յիշուի Մուրացանի անունը. նա այդ ճիւղին ալ յարեցաւ նախասիրաբար: Վէպ

վէպի ետեւէն հանեց՝ վիպասան առնունք ապահովցնելու համար, Զանց ընեւ լով գեղարուեստական մասը՝ որուն նկատմամբ վերը խօսեցայ՝ մենք լատիւթիւն մը, բարեսիրտութիւն մը կը նշմարենք իր առհասարակ ամբողջ գրութիւններուն մէջ, իր շուրջը տիրող իրերը, երիտասարդական նոր շարժումները տեսնելով՝ նա չհամեցաւ, և այդ իր տեղահանութիւնը՝ նա յայտնեց բազմաթիւ վէպերով, զանազան կերպերու տակ, իր անձնական տեսութիւնները՝ այնչափ տարիներէ նուիրագործուած, իր սպիտակահեր պապերէն ժառանգած անուշ յիշատակները՝ որոնց վերայ կը մեռնի, և որոնք չուզեր որ մեռնին, — ահա զազափարներ՝ զորոնք փութաց տարածել, պաշտպանել վրայ հասնող վտանգին դէմ։ Ամէն պարագայի մէջ՝ հանրութեան բարիք մ'ընել, իր շուրջը երջանկացնել, Լճակֆէլլոյին նմանը, փոքրիկ դասեր աւանդել, — իր մեծ նպատակն էր՝ Այդ դասերը, սակայն, յաջողեցան թէ ոչ՝ ուրիշ խնդրի։

Իսկն ան է որ այսօր այդ համակերելի գրագէտը — Մուրացանը — հողին յանձնելով՝ անգամ մ'ալ կ'ապացուցենք մեր անտարբերութիւնը հայ գրագէտներուն հանդէպ։

Հ. Ղ. Բադեան



1. «Իմ աղօթքը՝ մի շնորհ ցանկութիւն էր, տեսնել մեր մէջ, զոնք այսուհետեւ, Փայր Աննային և Նրա Աստուծոյն արժանաւոր հետեւողներ»։ — այսպէս կը վերջանէ նա իր խորհրդաւոր Միամեծութիւնի վէպը «Իսկ Փայր Աննա և Նրա Աստուծոյն» (Գարեգին) վէպն մէջ ներկայացուած են Հայրենիքի անձնանութիւն և անձնուրաց գործիչներ։

Գ Ե Ր Մ Ա Ն Ա Կ Ա Ն

Գ Ե Ր Ա Ն Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

(Որ մը, Մարք Թագաւորը, որսի ելնելով անտառին մէջ, եղջերուի մ'հետէն կը խոյանայ և կը հասնի այն լեռը՝ ուր կը գտնուէր որդւն՝ իր նայի ճեղքէ մը, որ բացուած էր կամարին մէջ և ուրկէ լոյսը բերն կը թափանցէր. կը տեսնէ զՏրիստան ու զԻստուլտ մէկմէկու քով պառկած և ի նշան պատկառանաց՝ միմիկ սուր մ'ալ իրենց մէջ տեղը դրուած։ Իսկոյն իր կասկածները կը փարատին։

Ոսկեգօծ երիտութի մերքիւ, — ամոհողութեամբ զրդիւ սէրը, — կապիկ իր միտքը, — և գրաւեց իր աչքերը — հոն՝ ուր կը մնէր — իր կնիաց գարունը։ — Գիտեց գիտելու, — հրեմոն իր ուրախութիւնը, — այն գեղեցկագոյն վայրկեանին — ուր մա երբէք չէր գտնուած, — Արկամը կ'ըսէ — որ մա վառվառն գոյն մ'ունէր — իր քաշած տոտապանքին համար, — իր չքմաղ կերպարամքը, — քոտորագիւ վարդն մը պէս, — ամծուլմ վիշը կը ծառայայթէր, — իր թերամը կը փայլէր ու կ'ողկեցօծէր — հրաշէկ անուխի մը մման, — Գիտեմ թէ ի՞նչ բանէ առաջ հկած է վիշտը ուրում վրայ արկածը կը խօսի, — առաստուծ, ցօղիմ մէջ, — զացած էր մարգագետինը, — այս էր որ իր գոյմը այդպէս վառվառն բրած էր, — Արկամակմ ծառագայթ մը, — Սոյնպէս կ'իջնէր անձաթիւ մէջ, — և կ'իյնար իր այտին, — իր բերքին և իր դուռնին վրայ, — Ներկա լուսաշողմեր կը հրճուէին, — իրարու հետ կը խօսնուէին, — երկու արեգակուցը, — երկու պայծառ լուսաւորներ կը միամային, — և իրարու հետ խառնուելով — իսկույտի երեսաց վրայ, — և մրցելով՝ կը գեղեցկացնէին զայն, — իր բերքին, նախատը, իր բոլոր գիմագծերը, — լի էին այնպիսի հմայքով, — որ Մարք հրապուրուեցաւ, — և սիրատունիկ՝ պիտի փափաքէր, — համբոյր մը դրոշմի այդ երեսին վրայ, — Սէրը իր բոցերը արծից, — ի տեսիլ այդ չքմաղ մարմնոյն, — այդ կնոջ գեղեցկութիւնը — մոգեց իր զգայարմքները, — և համակ գիմըր գնեց, — ամբարձմ լիմ ամիկ միշտ իր աչքերը, Նա գնալու մամր դիտեց, — շնորհիւ պատմութեան ձգուած քին, — պարամոցմ ու ուսիրը, — բազուկներն ու ձեռքերը, — Աւոյտնպասն մը, — հիստուած էր ճիւղաւորուած մագերում վրայ, — Նորքը իսկույտ իր տիրոջը երեցած չէր, — լի այդքամ հնչումաբով։

Նոր տեսաւ որ արեգակը, — ժայռիմ ցեղորած, քին ըսքծրուեցնէմ, — իսկույտի գէմքն վրայ մարագայթ մը կը ցոյցաւնէր, — վախցաւ թէ մի՞ գուցէ այդ երեսաց գնդը — խամրի, — ժողովեց դայարիք, ծաղիկներ և տերեւներ, — և ամոհմով զոգեց ցեղքը, — ապա օրնիկով գտիկին, — յամծմեց Աստուծոյ, — և հեռացաւ լալազին։